ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Մեղրի համայնք, Զորավար Անդրանիկ 2
հեռ. (0286)4 34 23 էլ-հասցե՝ meghri.syuniq@mta.gov.am

Թիվ 385
06 ԱՊՐԻԼԻ 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄԱՐԶՊԵՏ
ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան,

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 4-ը ապրիլի 2017 թվականի N23-Ա, N24-Ա, N25-Ն,N26-Ա, N27-Ա, N28-Ա, N29-Ա, N30-Ա, N31-Ա, N32-Ա, N33-Ա, N34-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Կատ.՝ Լ. Մեժլումյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՍՏԻՑ № 3701
«11» 04 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2017 թվական N23 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 4-ի N6 նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություն կատարելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություն կատարելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Կարեն Գուրգենի Հարությունյանին օտարելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Նոննա Սերգեյի Մկրտումյանին օտարելու մասին:

5.Հողամասի նպատակայնի նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը նվիրաբերելու մասին:

8.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք գյուղի Պղնձաքարի թիվ 1,4, Պղնձաքարի թիվ 2 և Պղնձաքարի թիվ 3 հասցեներում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարները սահմանելու մասին և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 10-ի N8-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասը օգտակար

հանածոների արդյունահանման նպատակով, առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրմանը համաձայնություն տալու մասին:
10.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի նախկին համայնքների 2013-2016 և 2014-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին:
11. Միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին:

Դեմ(0) Ձեռնպահ(0)

Կողմ (11)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2017 թվական N24 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N1 նիստի օրակարգը հաստատելու մասին» N1-Ա որոշման մեջ, «Հայաստանի հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցիչների նստավայրերի մասին» N7-Ա որոշման մեջ և հավելվածում, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու և «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N9-Ա որոշման հավելվածում, 2016 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N9-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N42-Ա որոշման հավելվածում, ««Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան: Տարածաշրջանային խորհրդատվական խորհուրդ-Արևիք» խորհրդի կազմում ընդգրկելու նպատակով խորհրդատվական խումբ ձևավորելու և խմբի անհատական կազմը հաստատելու մասին» N45-Ա որոշման հավելվածում «վարչական ներկայացուցիչ» բառակապակցության մեջ «ներկայացուցիչ» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել «ղեկավար» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2017 թվական N25 –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N2 -Ն որոշման հավելվածում, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցչի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» N3-Ն որոշման մեջ և հավելվածում, ««Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N8-Ն որոշման հավելված 1-ում «վարչական ներկայացուցիչ» բառակապակցության մեջ «ներկայացուցիչ» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել «ղեկավար» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4 ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2017 թվական N26 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԿԱՐԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքիավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող Սայաթ Նովա փողոցի թիվ 7/4 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված 32,7 քառ.մ մակերեսով բնակելի նշանակության շինությունը (ավտոտնակ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 06.03.2017թ. N06032017-09-0014 վկայական) և նրա համար սահմանված կարգով առանձնացված 0,00327հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0042-0018) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Կարեն Գուրգենի Հարությունյանին (նույնականացման քարտի համար՝ 002742377, տրված 02.06.2015 թվականին 045-ի կողմից)՝ հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

2.Առաջարկություն ներկայացնել Կարեն Հարությունյանին վճարելու Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշման 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, 35.1-ին կետով սահմանված վճարները՝
1)Ավտոտնակի համար 10 000 դրամ x 0,069 x 32.7 քմ = 22 563 (քսաներկու հազար հինգ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ,

2)Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 342 դրամ x 32.7քմ =11 184 (տասնմեկ հազար հարյուր ութսունչորս) << դրամ:
3) Վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ (վճարման անդորագրերի հիման վրա) 12 500 (տասներկու հազար հինգ հարյուր) դրամ պետական գրանցման և 500 (հինգ հարյուր) դրամ պետական տուրքի համար:
3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2017 թվական N27 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՔԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՆՈՆՆԱ ՍԵՐԳԵՅԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող Չարենց փողոցի թիվ 6/1 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված 30,15 քառ.մ մակերեսով բնակելի նշանակության շինությունը (ավտոտնակ, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 02.03.2017թ. N02032017-09-0017 վկայական) և նրա համար սահմանված կարգով առանձնացված 0.003015հա մակերեսով հողամասը (ծածկագիր՝ 09-002-0042-0019) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Նոննա Սերգեյի Մկրտումյանին (անձնագիր՝ AM0346061, տրված 22.06.2011 թվականին 045-ի կողմից)՝ հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

2.Առաջարկություն ներկայացնել Նոննա Մկրտումյանին վճարելու Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշման 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, 35.1-ին կետով սահմանված վճարները

1)Ավտոտնակի համար 10 000 դրամ x 0,069 x 30.15 քմ = 20 804 (քսան հազար ութ հարյուր չորս) ՀՀ դրամ,

2)Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 342 դրամ x 30.15 քմ =10 312 (տաս հազար երեք հարյուր տասներկու) << դրամ:
3)Վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ (վճարման անդորագրերի հիման վրա) 12 500 (տասներկու հազար հինգ հարյուր) դրամ պետական գրանցման և 500 (հինգ հարյուր) դրամ պետական տուրքի համար:
3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2017 թվական N28 –Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի և 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 8-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3.1 կետի 1) և 2) ենթակետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրի (գյուղ) հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելուն, ըստ որի առաջարկվում է Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 0,0583 հեկտար և 0,0429 հեկտար (ծածկագիր՝ 09-092-0313-0006) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «էներգետիկայի հողեր» գործառնական նշանակությամբ՝ ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու համար:

2.Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2017 թվական N29 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, 688-րդ հոդվածի առաջին մասով, 689-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող Ադելյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող մշակույթի պալատի 1-ին հարկի 21-րդ, 22-րդ և 24-րդ տարածքները՝ ընդհանուր 50,9 քմ մակերեսով՝ համաձայն հատակագծի (կցվում է), անհատույց օգտագործման իրավունքով, 10 տարի ժամանակահատվածով տրամադրել «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ին՝ որպես նպատակով: գրասենյակ օգտագործելու

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Դեմ(0) Ձեռնպահ(0)

Կողմ (11)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4
ք. Մեղրի

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

ՆԵՐԴԻՐ ԹԻՎ 1
ԹԻՎ 2386903 ՎԿԱՅԱԿԱՆ

Մ 1:200

(մասշտաբ)



տեղի հանձնման տեղի փաստաթղթի շրջանակներում բնակարանի թիվ 3 հասցեում գտնվող պահեստի 21-ի, 22-ի և 24-ի (ընդհանուր 50,9 քմ մակերեսով) փոխանցվելու մասին նշումներ չեն կատարվում:


6
206,8
1
156,2
9
23,6
8
23,6
33
7,10
34
8,0
35
34,1
36
18,0
41
2,3
42
2,3
39
11,2
43
4,9
38
32,4
37
54,1
42
17,3
5
11,8
7
14,2
12.40
6.75
3.90
6.75
9.40
24.0
5.40
17.8
17.8
21.4
6.1
14.80
14.20
15.5
10.6
11.60
2.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2017 թվական N30 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 19-ի համայնքի ղեկավարին ուղղած թիվ ՊՆ/510-2270 գրությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Ազատամարտիկների փողոցի թիվ 4/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N02032017-09-0016, կադաստրային ծածկագիր՝ 09-002-0042-0003) 0,22847 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ ՀՀ ԶՈՒ զինծառայողների համար բազմաբնակարան շենք կառուցելու նպատակով:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2017 թվական N31 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԳՅՈՒՂԻ ՊՂՆՁԱՔԱՐԻ ԹԻՎ 1,4, ՊՂՆՁԱՔԱՐԻ ԹԻՎ 2 և ՊՂՆՁԱՔԱՐԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N8-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, 20-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» N1746-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք գյուղի Պղնձաքարի թիվ 1,4, հասցեում գտնվող 99,4275 հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N090122017-09-0013), Պղնձաքարի թիվ 2 հասցեում գտնվող 34,321 հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N22092016-09-0038) և Պղնձաքարի թիվ 3 հասցեում գտնվող 17,5912 հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N15092016-09-0029) պետական սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ «ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասեր» գործառնական նշանակության ընդհանուր 151,3397 հա մակերեսով (3 միավոր) հողամասերի կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարները սահմանել համապատասխանաբար՝ 12 348 896 դրամ, 4 262 668 դրամ և 2 184 827 դրամ, ընդամենը՝ 18 796 391 (տասնութ միլիոն յոթ հարյուր իննսունվեց հազար երեք հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ (1 հեկտարի համար՝ 124 200 ՀՀ դրամ):

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք գյուղի Պղնձաքարի թիվ 1,4 ; Պղնձաքարի թիվ

2 և Պղնձաքարի թիվ 3 հասցեներում գտնվող,պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տարեկան վարձավճարներ սահմանելու մասին» N8-Ա որոշումը:

3. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4

ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2017 թվական N32 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ, ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի ը) ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2012 թվականի նոյեմբերի 6-ին տրված օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/188 թույլտվության, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ «ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասեր» գործառնական նշանակության 3,47385 հա հողամասը օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, առանց մրցույթի կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել «Սոս-Սաքո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սահմանելով տարեկան 431 452 (չորս հարյուր երեսունմեկ հազար չորս հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ վարձավճար:

2. Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետին:

Կողմ (11)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
4 ապրիլի 2017 թվական N33 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2013-2016 ԵՎ 2014-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի նախկին համայնքների՝ 2013-2016 և 2014-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (11)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4
ք. Մեղրի

Հավելված
Մեղրի համայնքի ավագանու
4 ապրիլի 2017թ. թիվ 33 -Ա որոշման

Մեղրի համայնքի 2013-2016, 2014-2018 թ.թ.սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերի իրականացման վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ	Ծրագրի անվանումը,	Ընդհանուր արժեքը /մլն.դրամ/	իրականացված	Ծանոթություն
1	2	3	4	5
	ք. Ագարակ	**905,7**	**359,9**	
1	Աբովյան,Ազատամարտիների փողոցների, Գարեգին Նժդեհ փողոցից մինչև Չարենց փողոցի թիվ 40 շենքը տանող ճանապարհահատվածի ասֆալտապատում, բարեկարգում	210,0	0,0	
2	Ագարակ-մաքսակետ կարճ ճանապարհահատվածի կառուցում և հարակից տարածքների համալիր զարգացում	80,0	30,0	Ծրագրով նախատեսված 6080,4 ք.մ. մակերեսով ճանապարհահատվածից ասֆալտապատվել է 1281 ք.մ. մակերեսով հատվածը
3	Ագարակ-մաքսակետ կարճ ճանապարհահատվածի լուսավորում	6,0	0,0	
4	Ագարակ քաղաքի ճանապարհատրանսպորտային երթևեկության նշանների և լուսացույցների տեղադրում	1,1	0,0	
5	Ագարակի քաղաքային համայնքի Չարենց փողոցի թիվ 27 և 28 շենքերի միջնամասում պուրակի կառուցում	40,0	15,0	Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են
6	Ագարակի մշակույթի տան ջեռուցման համակարգի ստեղծում և գույքի ձեռքբերում	15,0	0,0	
7	Ագարակի թիվ 1 մ/մանկապարտեզ "ՀՈԱԿ-ի 2-րդ մասնաշենքի 1-ին հարկի վերանորոգում և մասնաշենքերի ջեռուցման համակարգի ստեղծում	27,0	70,0	Մասնաշենքի 1-ին հարկի վերանորոգումը կատարված է, ջեռուցման համակարգ չի անցկացվել
8	Ագարակի քաղաքային համայնքի մարզադաշտի հիմնական վերանորոգում	80,0	0,0	
9	"ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի արվեստի դպրոց " ՀՈԱԿ-ի մասնաշենքի հիմնանորոգում և գույքի ձեռքբերում	125,0	118,5	Կատարված է
10	Ագարակի քաղաքային համայնքի բարեկարգման միջոցառումներ	50,0	15,0	Կատարված է (կանգառի կառուցում, մշակույթի տան շրջակայքի բարեկարգում, կանաչապատում)
11	Ագարակի քաղաքային համայնքի հասարակական զուգարանի կառուցում	6,6	6,0	Կատարված է

1	2	3	4	5
12	<<Ագարակի բնակարանային կոմունալ տնտեսություն և բարեկարգում >> ՀՈԱԿ-ի համար ավտոհավաքակայանի կառուցում	15,0	0,0	
13	<<Ագարակի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի մասնաշենքի կցակառույցի նորոգում և գլխավոր մուտքի բարեկարգում	150,0	105,4	Կատարված է
14	Ագարակի քաղաքային համայնքի կոյուղու մաքրման կայանի կառուցում և կոյուղագծերի վերանորոգում	100,0	0,0	
	բ. Մեղրի	***333,0***	***518,0***	
15	Մշակույթի տան հիմնանորոգում	82,0	17,0	Մասամբ վերանորոգվել է Մեղրիի արվեստի մանկական դպրոցը
16	Մեղրի քաղաքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում	80,0	380,0	Կատարված է
17	Մեղրի քաղաքի վարչական շենքի և տանիքի վերանորոգում	20,0	0,0	
18	Մեղրի քաղաքի ոռոգման համակարգի վերանորոգում	20,0	110,0	Վերակառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են
19	Մեղրի քաղաքի գերեզմանատների բարեկարգում	5,0	0,0	
20	Մեղրի քաղաքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	100,0	0,0	
21	Մեղրի քաղաքի Արաքսաշեն թաղամասի հանդիսությունների սրահի վերանորոգում	5,0	7,0	Կատարված է
22	Մեղրի քաղաքի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում	6,0	0,0	
23	Մեղրի քաղաքի ներհամայնքային ճանապարհներին կից հենապատերի վերանորոգում	10,0	4,0	Կատարված է
24	Մեղրի քաղաքի Մեղրի գետի վրա գտնվող 6 կամուրջների վերանորոգում	5,0	0,0	
	գ. Կարճևան	***32,3***	***74,0***	
25	Համայնքի սրահի ստեղծում	8,0	0,0	
26	Դեպի գերեզմանատուն էլեկտրաէներգիայի անցկացում	0,3	0,0	
27	Խաղադաշտի կառուցում	2,0	2,0	Կատարված է մասնակի
28	Գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում	10,0	0,0	
29	Ոռոգման համակարգի վերանորոգում	2,0	72,0	Վերակառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են
30	Մշակույթի տան վերանորոգում	10,0	0,0	
	գ. Ալվանք	***501,5***	***93,0***	
31	Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում և քյահրիզների մաքրում	50,0	0,0	
32	Դպրոցի և մանկապարտեզի վերանորոգում և գույքի ձեռքբերում	115,0	0,0	
33	Ոռոգման ներհամայնքային համակարգի վերանորոգում	35,0	93,0	Վերակառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են
34	Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և բարեկարգում	52,0	0,0	
35	Սեյսմիկ ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացում	17,5	0,0	

1	2	3	4	5
36	Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում	12,0	0,0	
37	Մշակույթի պալատի և գրադարանի նորոգում,գույքի ձեռքբերում և ներքին կահավորանք	25,0	0,0	
38	Աղբատար մեքենայի և կոնտեյներների ձեռքբերում	20,0	0,0	
39	Հեռագնաց արոտավայրերի և խոտհարքների ճանապարհի հիմնանորոգում	38,0	0,0	
40	Վարչական շենքի վերանորոգում	30,0	0,0	
41	Համայնքում կոյուղու ցանցի կառուցում	80,0	0,0	
42	Գերեզմանատան ցանկապատում	7,0	0,0	
43	Գյուղտեխնիկայի ձեռքբերում	20,0	0,0	
	գ. Շվանիձոր	***60,2***	***0,0***	
44	Խմելու ջրի ցանցի վերանորոգում, վարակազերծում/քլորացում/ , նոր ջրագծի կառուցում	40,0	0,0	
45	Մշակույթի տան, գրադարանի վերանորոգում	10,0	0,0	
46	Մանկապարտեզի շենքի վերանորոգում	12,0	0,0	
	գ. Լեհվազ	***71,0***	***100,0***	
47	Մանկապարտեզի տանիքի կապիտալ վերանորոգում	2,0	0,0	
48	Գազաֆիկացում	19,0	100,0	Կատարված է
49	Համայնքի ներքին ճանապարհների ասֆալտապատում	38,0	0,0	
50	Աղբատար մեքենայի ձեռքբերում	12,0	0,0	
	գ. Վահրավար	***28,0***	***0,0***	
51	Գյուղտեխնիկայի ձեռքբերում	8,0	0,0	
52	Խմելու ջրի արտաքին համակարգի կառուցում	7,0	0,0	
53	Համայնքային ճանապարհների վերանորոգում	1,0	0,0	
54	Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	10,0	0,0	
55	Ոռոգման համակարգի բարելավում	2,0	0,0	
	գ. Կուրիս	***61,0***	***14,1***	
56	Համայնքային կենտրոնի շենքի վերակառուցում	20,0	0,0	
57	Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և բարեկարգում	10,0	14,0	Կատարված է
58	Ոռոգման ջրատարի վերակառուցում	15,0	0,0	
59	Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորում	2,0	0,1	Կատարված է մասնակի
60	Գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղսարքավորումների ձեռքբերում	10,0	0,0	
61	Գերեզմանատան ցանկապատի վերակառուցում	1,0	0,0	
62	Վարչական շենքի վերանորոգում	3,0	0,0	
	գ. Գուդեմնիս	***32,0***	***0,0***	
63	Խմելու ջրի ցանցի վերանորոգում	12,0	0,0	

1	2	3	4	5
64	Համայնքի ճանապարհների և փողոցների բարեկարգում	20,0	0,0	
	գ. Վարդանիձոր	***128,4***	***0,1***	
65	Գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղ սարքավորումների ձեռքբերում	10,0	0,0	
66	Թխկուտ գյուղի խմելու ջրի ջրատարի և ՕԿՋ-ի կառուցում	15,0	0,0	
67	Համայնքային կենտրոնի շենքի կապիտալ վերանորոգում	50,0	0,0	
68	Ոռոգման համակարգի կապիտալ վերանորոգում	8,4	0,0	
69	Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և բարեկարգում	12,0	0,0	
70	Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորում	3,0	0,1	Կատարված է մասնակի
71	Թխկուտ գյուղի ակումբի և գրադարանի շենքերի կապիտալ նորոգում	12,0	0,0	
72	Վարդանիձոր գյուղի խմելու ջրի ջրատարի և ՕԿՋ-ի կառուցում	18,0	0,0	
	գ. Լիճք	***88,4***	***16,0***	
74	Լիճք գյուղի խմելու ջրատարի և ՕԿՋ-ի կառուցում	17,0	7,5	Կատարված է
75	Համայնքային կենտրոնի շենքի կապիտալ վերանորոգում	14,0	0,0	
76	Ոռոգման համակարգի կապիտալ վերանորոգում	2,4	7,0	Կատարված է
77	Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և բարեկարգում	29,0	0,0	
78	Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորում	3,0	1,5	Կատարված է
79	Գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղսարքավորումների ձեռքբերում	8,0	0,0	
80	Ակումբի և գրադարանի շենքերի կապիտալ նորոգում և կահավորում	15,0	0,0	
	գ. Տաշտուն	***73,0***	***10,5***	
81	Գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղ. սարքավորումների ձեռքբերում	10,0	0,0	
82	Համայնքի խմելու ջրի արտաքին և ներքին համակարգի վերանորոգում և կառուցում	20,0	0,3	Կատարված է մասնակի (300 գծմ խողովակաշարի վերանորոգում)
83	Մշակույթի տան և գյուղապետարանի շենքի կապիտալ վերանորոգում	20,0	0,0	
84	Ոռոգման համակարգի կապիտալ վերանորոգում	14,0	7,0	Կատարված է մասնակի
85	Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և բարեկարգում	8,0	3,0	Բարեկարգվել է 150մ երկարությամբ ճանապարհահատված
86	Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորում	1,0	0,2	Կատարված է մասնակի
	Ընդամենը	***2314,5***	***1185,6***	

Համայնքի ղեկավար՝ Գ. Մ. Ֆրանգուլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
4 ապրիլի 2017 թվական N34 -Ա

ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում ծնելիության և բազմազավակության խթանման նպատակով՝ Մեղրի համայնքում հաշվառում ունեցող ընտանիքի չորրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում ընտանիքին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կողմ (11)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. ապրիլի 4
ք. Մեղրի